FREEDOM BROKER

CHESS ACADEMY OF ARMENIA

Chessify

ՖՐԻԴՈՍ
շախմատի մրցաշար

26-27
ԱՊՐԻԼԻ, 2025Թ

Հայաստանի ազգային պատկերասրահ
Հասցե՝ Արամի 1 փողոց, ք. Երևան, 0010, Հայաստան

ՖՐԻԴՈՄ
շախմատի մրցաշար

1. Կազմակերպիչ
«Ֆրիդոմ Ֆինանս Արմենիա» ՍՊԸ

2. Գլխավոր աջակից
«Չեսիֆայ» ՍՊԸ
Հայաստանի շախմատի ակադեմիա

3. Անցկացման վայր
Հայաստանի ազգային պատկերասրահ
Հասցե՝ Արամի 1 փողոց, ք. Երևան, 0010, Հայաստան

4. Մասնակցություն/ձեվաչափ

4.1 Մրցաշարը կանցկացվի թիմային հաշվարկով՝ 4 խաղատախտակով:

4.2 Մրցաշարին կարող են մասնակցել Հայաստանում գործունեություն ծավալող և իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված ընկերությունները: Կազմակերպիչն իրավունք ունի մերժել պահանջներին չհամապատասխանող թիմի մուտքը կամ բացառություններ անել:

4.3 Շախմատային գործունեություն ծավալող ընկերությունները չեն կարող մասնակցել մրցաշարին:

4.4 Յուրաքանչյուր ընկերություն կարող է մրցաշարին հայտավորել մեկական թիմ:

4.5 Թիմի բոլոր անդամները պետք է լինեն չափահաս: Թիմի բոլոր անդամները պետք է լինեն ընկերության աշխատակիցներ կամ խորհրդի անդամներ առնվազն 2025 թվականի հունվարի 1-ից:

4.6 Յուրաքանչյուր թիմ կարող է ունենալ առավելագույնը մեկ հրավիրված խաղացող, ով անմիջական կապ չունի ընկերության հետ:

4.7 Յուրաքանչյուր թիմ պետք է ունենա 4 հիմնական և, ցանկության դեպքում, 1 պահեստային խաղացող (պահեստային խաղացողը կարող է խաղալ միայն 4-րդ խաղատախտակի վրա):

4.8 Յուրաքանչյուր թիմում կարող է ընդգրկված լինել միայն մեկ խաղացող, ում ազգային կամ ՖԻԴԵ-ի ստանդարտ վարկանիշը գերազանցել է 2300-ը /2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ/: Մյուս մասնակիցների և՛ ազգային, և՛ ՖԻԴԵ-ի վարկանիշը պետք է ցածր լինի 2300-ից /2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ/:

4.9 Յուրաքանչյուր թիմում պետք է լինի մեկ ավագ, ով կարող է լինել ինչպես թիմի խաղացող, այնպես էլ ոչ:

5. Մրցակարգ

5.1 Մրցաշարը կանցկացվի ըստ ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների, շվեյցարական մրցակարգով՝ 9 խաղափուլով:

5.2 Յուրաքանչյուր մրցախաղում թիմային հաղթանակը գնահատվում է 2 միավոր, ոչ-ոքին՝ 1 միավոր, պարտությունը՝ 0 միավոր:

5.3 Մրցանակների հավակնող թիմերի հավաքած միավորների հավասարության դեպքում հաշվի է առնվում.

ա/ թիմի անդամների անհատական արդյունքների հանրագումարը,
բ/ թիմերի միջև անհատական հանդիպման արդյունքը,
գ/ խաղատախտակների վրա ցույց տված արդյունքը (1, 2, 3, 4 խաղատախտակներ):

5.4 Վերոնշյալ ցուցանիշների հավասարության դեպքում անցկացվում է լրացուցիչ մրցախաղ (մրցաշար-մրցախաղ՝ կայծակնային խաղի կանոններով. յուրաքանչյուր խաղացողին տրվում է 5-ական րոպե):

5.5 Եթե խաղատախտակների վրա 2 և ավելի խաղացողներ ձեռք են բերել հավասար միավորներ, ապա որպես լրացուցիչ ցուցանիշ հաշվի է առնվելու նրանց հակառակորդների միջին գործակիցները:

6. Ժամակարգ

10 րոպե մինչև պարտիայի ավարտը (յուրաքանչյուր քայլին 2 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից):

7. Ժամանակացույց

Մրցաշարը տեղի կունենա 2025 թվականի ապրիլի 26-ին և 27-ին՝ հետևյալ ժամանակացույցով.

26 ապրիլի	**27 ապրիլի**
12:00 1-ին տուր	12:00 6-րդ տուր
12:30 2-րդ տուր	12:30 7-րդ տուր
13:00 3-րդ տուր	13:00 8-րդ տուր
14:00 4-րդ տուր	13:30 9-րդ տուր
14:30 5-րդ տուր	15:00 փակման արարողություն

8. Մրցանակներ

Հիմնական մրցանակներ
1-ին տեղ գրաված թիմ՝ «Freedom Holding Corp.»-ի (NASDAQ: FRHC) 3-ական բաժնետոմս (յուրաքանչյուրը մոտավորապես 130 ԱՄՆ դոլար արժողությամբ):

Հատուկ մրցանակներ

- լավագույն արդյունք ցույց տված մասնակից /1-4-րդ խաղատախտակի վրա առնվազն 7 մրցախաղ խաղալու դեպքում/: Նվեր՝ «DiliJazz Hotel & Restaurant»-ում մեկ գիշերակաց 2 անձի համար (59.000 դրամ արժողությամբ):
- լավագույն արդյունք ցույց տված կին մասնակից /առնվազն 6 մրցախաղ խաղալու դեպքում/: Նվեր՝ «Perfecta Wellness & Spa»-ի նվեր քարտ (30.000 դրամ արժողությամբ):

Հատուկ մրցանակներ է սահմանել նաև «Չեսիֆայ» ընկերությունը.
Հաղթող թիմի անդամները կստանան «Master Combo»-ի ամսական բաժանորդագրություն www.chessify.me կայքում (յուրաքանչյուրը՝ 70 ԱՄՆ դոլար արժողությամբ):

Հատուկ մրցանակներ են սահմանված նաև 1-4-րդ խաղատախտակի վրա լավագույն արդյունք ցույց տված մասնակիցների համար /առնվազն 7 մրցախաղ խաղալու դեպքում/: Հաղթողները կստանան 50-ական ԱՄՆ դոլարին համարժեք «Chessify Coin», որը կարող են օգտագործել www.chessify.me կայքում:

Բոլոր թիմերին կտրվեն մասնակցության վկայականներ:

9. Գրանցման կարգ

Հարկավոր է լրացնել կանոնադրությանը կից առցանց հայտը՝ https://forms.gle/sP2BpCJ6xa3YHNrM7: Մրցաշարի մասնակից աշխատակիցների՝ տվյալ ընկերության աշխատակից լինելը հավաստող փաստաթուղթն ուղարկել info@chessacademy.am էլ. հասցեին մինչև ապրիլի 22-ը, ժամը՝ 18:00:

10. Կոնտակտային տվյալներ

Հեռ՝ +374 43 448473
էլ. հասցե՝ info@chessacademy.am